ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի ապրիլի 09-ին կնքված ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-11 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի նոյեմբերի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի հավելված 2 հանդիսացող գնման ժամանակացույցում, ինչպես նաև Պայմանագրի 4.1 կետում կատարել փոփոխություններ:

Փոփոխության նկարագրություն: Վճարման ժամանակացույցի և 4.1 կետի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3 կետ, <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման 60-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.04.2015թ. ԿՆՔՎԱԾ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-11 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «10» նոյեմբերի 2015թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային Ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հոկոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.04.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում **«3 170 000 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար)** ՀՀ դրամ» բառերը փոխարինել **«3 804 000 (երեք միլիոն ութ հարյուր չորս հազար)** ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Բևեռային Ուղի» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք.Երևան, Մանանդյան 25շ. բն.6
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 900011192151, 900011192052	Հ/Հ՝ 1810052083823312
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Զարգացման Հայկական Բանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա.Հոկոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
09.04.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-11 պայմանագրի
10.11.2015թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Ծրագիր՝ 03 03 01 06՝ ՀՀ դատարանների պահպանում											
1.	Սարքերի և սարքավորում ների սպասարկման ծառայություններ	1426500	1426500	1426500	2377500	2377500	2377500	3170000	3170000	3170000	**3170000**
Ծրագիր՝ 03 03 01 05՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ											
1.	Սարքերի և սարքավորում ների սպասարկման ծառայություններ	---	---	---	---	---	---	---	634000	634000	**634000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151, 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային Ուղի» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մանանդյան 25շ. բն.6
ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1810052083823312
«Զարգացման Հայկական Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Գրիգորյան

(ստորագրություն)
Կ.Տ